# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՈԱ ԷԱՃԱՊՁԲ-22/10//Բ/1/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 4 | Սև կիսաբրդյա գործվածքից՝ 30% բուրդ, 70% պոլիէսթեր, գործվածքի տեսակը 6-րդ դասի, 1ք/մ 490գ, կիսաշիտակ (հակառակ ուղղություններով) թևերի և գոտկատեղի գործվածքը 1/1 չափով, կլոր վզով: Կրծքամասում և մեջքամասում սվիտերի ամբողջ լայնքով գործված է 0.5 սմ լայնքով կարմիր ժապավեն, որի վրա առջևի աջ մասում ամրացվում է ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»», իսկ թիկունքի մասում ««POLICE»» բառերը: Ձախ կրծքամասում տեղադրված է կափույրով կոճկվող վրադիր գրպան: Ուսագլուխների և արմունկների հատվածում ամրակցված է սև գույնի զամշե կտոր, շախմատաձև կարով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, իսկ աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի թևքանշան: Թևքանշանները ասեղնագործած՝ կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխ. պայմանի համարը: Անհրաժեշտության դեպքում, պատասխանատու ստորաբաժանման պահանջով, մատակարար կազմակերպությունը տրամադրում է գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված |

| | |
|---|---|
| | լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս - հասակային սանդղակը. 44/2 – 62/6, քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-22/10//Բ/1/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 4 | |